«ՍՏԱՑԻՐ ՔՈ ՍՄԱՐԹՖՈՆԸ» ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. «Ստացիր քո սմարթֆոնը» գովազդային վիճակախաղը (այսուհետ նաև՝ Վիճակախաղ) անցկացվում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Կազմակերպիչ) կողմից:

2. Վիճակախաղը ներքոգրյալ պայմանների կատարման պարագայում հնարավորություն է ընձեռում դրա մասնակիցներին (սույն կետի մասով մասնակից կարող է հանդիսանալ միայն ֆիզիկական անձը) շահել՝
   - Դյուրակիր համակարգիչ 59412102 LENOVO IdeaTab A350
   - Դյուրակիր համակարգիչ ASUS FonePad HD 7 ME175CG-1B
   - Բջջային հեռախոս Archos 45 Titanium/ Dual Sim/ 4.5
   - Բջջային հեռախոս Archos 50 Neon/ Dual Sim/ 5 FWVGA
   - Բջջային հեռախոս GOCLEVER QUANTUM 450 White

3. Վիճակախաղին մասնակցելու համար անհրաժեշտ է 2016 թվականի նոյեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 23-ը ներառյալ բաժանորդագրվել 1 տարի բաժանորդագրության պայմանով սակագնային/ծառայությունների փաթեթներից որևէ մեկին՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 26 հասցեում գտնվող Ռոստելեկոմ վաճառքի և սպասարկման սրահում: Բաժանորդագրության պահին յուրաքանչյուր բաժանորդ ստանում է թվով մեկ խաղարկության կտրոն, որտեղ նշվում են վերջինիս անունը, ազգանունը և դիմումի համարը (ID), այսուհետ՝ բաժանորդի տվյալներ:

4. Խաղարկության կտրոնի՝ բաժանորդի տվյալները կրող հատվածը կտրվում և գցվում է Վիճակախաղի համար նախատեսված Փրոմո-արկղի մեջ, իսկ մյուս հատվածը տրամադրվում է Բաժանորդին:

5. Բաժանորդի՝ Վիճակախաղին մասնակցելու իրավունքը ծագում է սույն պայմաններին համապատասխան խաղարկության կտրոնը ստանալուց հետո:

6. Եթե Բաժանորդը մինչ Վիճակախաղի անցկացումը դադարեցնում է բաժանորդագրությունը/լուծում է բաժանորդային պայմանագիրը, կամ բաժանորդային պայմանագիրը միակողմանիորեն լուծվում/կասեցվում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից՝ մատուցված Ծառայությունների դիմաց հաշվեգրված պարտքի պատճառով, կամ Ծառայությունները չեն ակտիվացվում մինչև Վիճակախաղի օրը, ապա Բաժանորդը տվյալ խաղարկության կտրոնով կորցնում է Վիճակախաղին մասնակցելու իր իրավունքը:

7. Վիճակախաղի անցկացման համար «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից ձևավորվում է Վիճակախաղերի անցկացման հանձնաժողով՝ բաղկացած առնվազն 3 (երեք) հոգուց: Վիճակախաղերի անցկացման հանձնաժողովի գործառույթների մեջ մտնում են՝

- Վիճակախաղի մրցանակների խաղարկության անցկացումը,
- Վիճակախաղի անցկացման արդյունքների հաստատումը՝ համապատասխան արձանագրության ստորագրման եղանակով: Արձանագրության ձևը հաստատվում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից:

8. Վիճակախաղի ընթացքում հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով: Հաճախորդների շրջանակից կընտրվեն անծանոթներ, ովքեր Փրոմո-արկղից կհանեն հաղթողների խաղարկության կտրոնները:

9. Վիճակախաղի շրջանակներում Փրոմո-արկղը կբացվի ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան-Մեծ 26 հասցեում գտնող վաճառքի և սպասարկման սրահում կայանալիք հանդիսավոր արարողության ժամանակ: Վիճակախաղի օրվա և ժամի մասին բաժանորդները կծանուցվեն կայքի և այլ աղբյուրների միջոցով՝ դրանից առնվազն մեկ շաբաթ առաջ:

10. Վիճակախաղի ընթացքում մրցանակները խաղարկվելու են հետևյալ հաջորդականությամբ՝

    1. Դյուրակիր համակարգիչ 59412102 LENOVO IdeaTab A350
    2. Դյուրակիր համակարգիչ ASUS FonePad HD 7 ME175CG-1B
    3. Բջջային հեռախոս Archos 45 Titanium/ Dual Sim/ 4.5
    4. Բջջային հեռախոս Archos 50 Neon/ Dual Sim/ 5 FWVGA
    5. Բջջային հեռախոս GOCLEVER QUANTUM 450 White

11. Մրցանակը ստանալու համար Բաժանորդի ներկայությունը Վիճակախաղի հանդիսավոր արարողությանը պարտադիր է: Վերջինիս ներկա չգտնվելու պարագայում նա կորցնում է մրցանակը ստանալու իրավունքը և այն կրկին խաղարկվում է սույն պայմաններով սահմանված կարգով:

12. Բաժանորդները, որոնց տվյալներով խաղարկության կտրոնները պատահական կարգով կընտրվեն և Վիճակախաղի անցկացման հանձնաժողովի կողմից կճանաչվեն հաղթող՝ կընդգրկվեն Վիճակախաղի անցկացման համապատասխան արձանագրության մեջ:

13. Մրցանակը ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթը և խաղարկության կտրոնը: Նշված փաստաթղթերից որևէ մեկը չներկայացնելու դեպքում «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն իրավասու է տվյալ շահումը համարել անվավեր:

14. Մրցանակներ շահած Բաժանորդները «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ խնդրանքով համաձայնում են մասնակցել հարցազրույցների և/կամ ֆոտո/վիդեո նկարահանումների, որոնք անցկացվում են գովազդային նպատակներով և կապված են Վիճակախաղին մասնակցելու հետ: